ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Տավուշի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Տավուշի մարզում, %

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Տավուշի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 0,4%-ով և կազմել է 90%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,8%-ով՝ կազմելով 91,6%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,3%-ով՝ կազմելով 95,9%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Իռ-Վինգ» ՍՊԸ-ում (61,6%), «Արևհատ և Անի ԸԲԱՊ» ՍՊԸ-ում (66,7%), «Հաղարծնի ԱԱՊԿ» ՓԲԸ-ում (75%), «Ազատամուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում (78,3%) և «Նավուրի ԱԱՊԿ» ՓԲԸ-ում (84,6%), (Աղյուսակ):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է ցուցանիշների իջեցում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,3%-ով և կազմել 90%, 2 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 1%-ով և կազմել 91,6%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Տավուշի մարզում՝ 13,7%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Տավուշի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի